ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՂԱԴՐԵՑ ԿՐԵՄԼԻՆ

Վերջին իրադարձությունները Գեղաշենում, Մարտունաշենում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում համաշխարհային մամուլի ուշադրության կենտրոնում են: Իրադարձություններին անդրադարձել է նաեւ «Յուրրիյեթ»ի մոսկովյան թղթակից Ներդուն Հաջիողլուն, տվյալ թերթի ապրիլի 7-ի համարում լույս տեսած «Հայաստանը մեղադրում է Կրեմլին» վերնագիրը կրող հոդվածով: Նպատակահարմար եմք գտնում այն ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

ՄՈՍԿՎԱ. Յուրրիյեթ. մայիսի 7 - Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Ադրբեջան - Ղարաբաղ սահմանի վրա հայ գրոհայինների եւ խորհրդային ու ադրբեջանական կինված ուժերի միջեւ տեղի ունեցած ընդհարումների հետեւանքով, որոնք 36 հոգու սպանության պատճառ դարձան, մեղադրեց Մոսկվային: Նրա տեսակետի համաձայն, վերոհիշյալ դեպքերը ծառայում են անկախության ուղին բռնած Հայաստանին պատժելու նպատակին: Լեւոն Տեր-Պետրոսյանը անցյալ ուրբաթ հանդիպում ունեցավ պրեզիդենտ Գորբաչովի հետ, որի ընթացքում քննարկվեց Ղարաբաղում եւ Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանամերձ շրջաններում ստեղծված լարված իրավիճակը: Իսկ նախորդ օրը կազմակերպված մամուլի ասուլիսում նա տեղեկություններ հաղորդեց հանդիպման արդյունքների մասին: Տեր-Պետրոսյանը նշեց, որ մեկուկես ժամ տեւողությամբ հանդիպման ժամանակ ինքն անձամբ երաշխիքներ է ստացել Խորհրդային Միության պրեզիդենտից, որ հայերի տեղահանությունը բացառվում է:

Լեւոն Տեր-Պետրոսյանի կարծիքով Մոսկվան ու Ադրբեջանը համագործակցելով միմյանց հետ, Հայաստանի դեմ արշավ են ըսկսել, դարձնելով այն պետական ահաբեկչության կոհը: Այնուհետեւ նա ասաց. «Հայաստանը շարունակում է ընթանալ անկախության ուղիով: Եւ քանի որ Մոսկվան ոչ մի կերպ չի կարողանում հանդուրժել դա, հետեւաբար մեր հանդեպ դիմում է պատժիչ միջոցների: Տվյալ դեպքում Մոսկվան մեկ քարով երկու նապաստակ խփելու նպատակ է հետապնդում. մի կողմից ցանկանում է տաք վիճակում պահել Ղարաբաղի հարցը եւ ամեն կերպ խուսափելով լուծումից, հասնել դեմոկրատական ընտրությունների միջոցով իշխանության գլուխ եկած ղեկավարության հանդեպ ժողովրդի աջակցության նվազումին, մյուս կողմից պարգեւատրել խորհրդային հանրապետություններից կոմունիստական վարչակարգի գրեթե միակ ներկայացուցիչը հանդիսացող Ադրբեջանի ղեկավար Մութալիբովին»:

Նախագահ Տեր-Պետրոսյանը պնդեց, որ անցյալ շաբաթ խորհրդային եւ ադրբեջանական կինված ուժերը հարձակվելով հայկական երկու գյուղերի վրա՝ «36 անմեղ մարդկանց» սպանության պատճառ են դարձել: Նա շեշտեց, որ ներկայիս դեպքերը, 1990 թվականի հունվարին Բաքվում տեղի ունեցած իրադարձություններից, էապես տարբերվում են: Հանրապետության նախագահի պնդմամբ Բաքվի իրադարձությունները տեղի էին ունենում երկու ժողովուրդների միջեւ, իսկ ներկայիս իրադարձությունները հրահրվում են խորհրդային բանակի կողմից:

Մարտունաշեն եւ Գետաշեն գյուղերը, ուր տեղի են ունենում խորհրդային եւ ադրբեջանական կինված ուժերի ընդհարումները հայ գրոհայինների հետ, մտնում են Ադրբեջանի սահմանի մեջ: Սակայն վերոհիշյալ գյուղերում հայերը կազմում են բացարձակ մեծամասնություն:

Ինչքան էլ որ Հայաստանի առաջնորդը պնդում է, թե ընդհարումների ժամանակ սպանվել են անմեղ մարդիկ, այնուամենայնիվ խորհրդային պաշտպանության ու ներքին գործերի նախարարությունների համատեղ հայտարարության մեջ իրադարձությունների պատասխանատվությունը բարդվում է հայ գրոհայինների վրա: Հայտարարության մեջ շեշտվում է այն հանգամանքը, որ «հայ գրոհայինների հարձակումները կինված ուժերի վրա նոր թափ են ստացել եւ խորհրդային բանակը պատրաստ է կատարել արյունահեղ իրադարձությունները կանխելու իր պարտականությունը»: □